

քե՛հ՝ ո՛չ օժիտ է բերել, քամահրում են: Բայց նա լուռ է, որովհետև իբրև նույն իրականության պտուղ, գիտի խաղի կանոնները: Հարսնաբույրը տազնապում է՝ քրա առողջության համար. շատ ցուրտ է, հարսին զոհն մի քիչ խնամեն, բայց փեսայի մայրը, բույրերը, ազգականները, դրացիները, յուրաքանչյուրն իր նկարագրին համապատասխան, անվերջ շարունակում են զոհի անարգումը...

Հաջորդ դրվագում ես արտաքուստ դրության տերը փեսայի ազգականներն են. նրանք որոշում են հնոց ավանդույթների համաձայն դաս տալ քիչ-օժիտ բերած հարսին՝ խաղալով իբրև աղջկան դաստիարակելու, իրականում հարսին վախեցնելու հայտնի տեսարանը: Սակայն պարզվում է նրանք հաշվի չեն առել, որ արդեն ոչ քե՛հերին իբրև նույն իրականության գործունե հերոս, նորափեսայի գլխին ինչպիսի՝ կանացի զգայացումը խաղեր է խաղացել, որ հիմա հայտնակ է դարձրել նրան: Պարզամիտ սկեսրոջ ու տալերի ներկայացումը ստանում է անսպասելի զարգացում՝ պարզվում է, որ «տան տերը»՝ փեսան, գերի է դարձել հարսին, եւ վերջինս է այսուհետև տնօրինելու բոլորի կյանքը...

Նման երկերում հեղինակը գործ ունի իրականության համեմատաբար ընդգրկում տեղամասի՝ հերոսների, հարաբերությունների, կոլորիտի, հոգեբանության, կյանքի գործընթացների վերաբերումն հետ, նրա խնդիրը միայն ներկայացնել-քննադատելը չի, այլ գեղարվեստական ընդգրկում պատմություն ստեղծելը...

Ասվել է հաճախ, քե՛հ Պարոնյանի ուշադրության կենտրոնում էր աշխատավոր դասակարգը՝ հոգսերով ու կյանքով: Դա իրավացի դիտողություն է այն իմաստով, որ գրողը նրան էր համարում ժողովրդի առաջնատարրը: Մյուս կողմից, սակայն, չի կարելի այնպես պատկերացնել բանը, քե՛հ նա համագային խնդիրները լուծելու գործում չէր տեսնում կամ արհամարհում էր մյուս խավերի դերը: Ուրիշ բան, որ երգիծում էր որոշների բռնած ընթացքը, նկարագրերը, սին հավակնությունները: Ահա, օրինակ, հայ ազնվական ընտանիքի որդու կերպարը, որ հիանալի պատկերված է «Լարձը կանխիկ առնված ծանուցում մը» (8, 71) երկի մեջ:

Մեղում առողջ, այրական դիմագիծ ունեցող սերունդ դաստիարակելու մտահոգությամբ մտնում է ազնվական ընտանիքի փափկասուն կենցաղի գլխավոր արդյունքի իմաստավորմանը: Ինչ պտուղ է նա, ինչ նկարագիր, բարոյական ու մարդկային ինչ հատկանիշների, ինչ փիլիսոփայության կրող: Հերոսը ինքն է ներկայացնում իր կերպարը. «Տղայությանս անգամ մը հավ մը մորթեցի. արյուն տեսա նե՛ սոսկում մը եկավ վրաս, անկե ի վեր սերսնի պես բան մըն են»:

Հավատարիմ իր սովորությանը՝ Մեղում չի մանրամասնում խոսքը, բայց մղում է լուռ խոհերի՝ ի՛նչ ազգային-հասարակական, նույնիսկ մարդկային-բարոյական դերի կարող է հավակնել որեւէ սերնդի, խավի նման ներկայացուցիչը: Երբեք է, նա իրեն մեծադուրդ բառերով հորջորջում է «Մկրտիչ Խոռխոռունի, որդի ազնվականի, որդի դյուցազնի», սակայն նրա ապագայի դատավճիռը հենց սկզբից հայտնի է Մեղվին. երկի վերնագիրը՝ «Լարձը կանուխեն առնված ծանուցում մը», դա է ասում: Տեսեք, «ազնվականի, դյուցազնի որդին», արդեն հասցրել է խեղճ մարդկանց բնորոշ կենսափիլիսոփայությունը իր գրախոս դարձնել. երգվել է, որ ոչ ինքը, ոչ զավակներն ու թոռները զինվոր չեն լինելու, գենը չեն բռնելու:

Ակամա հարց է առաջանում, եւ սա ասվում է Օսմանյան կայսրության պես բարբարոս երկրում, ուր գոյության դաժան պայքար էր մղվում, ուր հպատակ ազգերը ձգտում էին թոթափել մարդակեր լուծը, ուր ազգային փրկության ծրագրեր էին կազմվում:

Պատմական ժամանակի՝ հեռավորությունից դիտելով անցած օրերը՝ Մեղվի բացահայտած նման կերպարների շնորհիվ պարզ է դառնում, քե՛հ ինչու ազգային իրականության որոշ շերտեր միանգամից աննկատելիորեն դադարեցրին գոյությունը, երբ եկան խառնակ ժամանակներ:

**ГЛДЖАН А. М. — Художественное произведение 1870-1874 гг. А. Пароняна.** В творческом пути великого сатирика А. Пароняна выделяются два периода с соответствующимся стадиями. Мы в отдельных статьях рассматриваем особенности каждого.

В данной статье мы исследуем эстетические взгляды, художественные, частично и публицистические произведения сатирика, который окончательно переехал в Константинополь, где сначала сотрудничал с различными журналами, став затем редактором журнала "Мегу" ("Пчела").

## ՈՒՐՎԱԳԾԵՐ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԱՂԱՍՈՒԹՅԱՆՑ

Վ. Ս. ՄԱՀԱԳՅԱՆ  
(Խաարուր)

Միջնադարյան հանճարեղ մտածողներից ու պետական գործիչներից է Գրիգոր Մագիստրոսը, որի անգուցական գրիչը «ծովածավալ հմտությամբ» երկնել է իմաստասիրության, տրամաբանության եւ բանաստեղծության կատարյալ մոտիվներ, առկայացել հայրենասիրության բունկուն ու բաղաբարդ ծիրերի մեջ՝ կոչելով հերոսության ու հաղթանակների: Այդպիսով պատմականորեն խառնակ մի ժամանակաշրջանում, երբ իդեալի որոնումները հանգում էին հոգու հարատևության ու մարմնի վաղանցիկության ողբերգական հակասություններին՝ մղվելով Ս. Գրքի ավատատիրական մեկնություններից դեպի ճգնաժամային խաղաղության փառարանը, նա մշտապես կրեց հոգեւորի եւ աշխարհիկի ներդաշնակության խորհուրդը սակավահասու, ըստ այդմ նրա մտավոր աշխարհագրությունը ուրվագծվեց արեւելյան եւ հեղինակավորման համար ճշմարտություններից մինչեւ ի հայ լեզու գրյալ խոյանքները լուսեղեն: Նրան «իբրու զստիմս դիեցեալ» հարազատ են եւ՝ «առասանութիւնները Հոմերական, Պյութագորական ու Պլատոնական», եւ՝ արքայիկ փառքերը մեր մախնյաց, եւ՝ ուղղափառությունը մեր եկեղեցվո ու պետականության, հանուն որի նա չի հապաղում պատժելու անգապատակտիչ խժոժությունները աղանդավորաց եւ հերձվածողների:

Նա անբաբայց եւ գտադյուն ժառանգորդի հիացական վերաբերմունք ունի մասնավորապես դեպի հուճական արվեստն ու իմաստասիրությունը եւ ընդհանրապես դեպի գիտությունն ու հառաջընթացը, եւ, լինելով եկեղեցու ընդգծված ջատագովներից, զարմանալիորեն բացարձակ զերծ է այն ժամանակներին հատուկ սխալաստիկական ու միստիկական աշխարհըմբռնումից, ինչ այդ շրջանում համատարած էր այդուր: Մագիստրոսի համար իր բաղձալի արվեստի ու գիտության ոլորտները առավել են «... բան զոսկի եւ բան զակնս եւ գրոյր բաղկացեալ ճիւղ զղա կապտեալ յոքնական առաքինութեամբ, ի մի հաւաքեալ...»:Նրա այս արվեստամղում ոգորումն ու վարպետությունն է նկատի ունեցել 12-րդ դարի մեծ բանաստեղծ Ներսես Շնորհալին՝ ներբողելով.

Ըստ Հոմերի տաղաչափեալ.

Ըստ Պղատոնի պերճաբանեալ

Յունականի ներքուն եղեալ

Յոնք իմաստիցն մակացեալ...<sup>2</sup>

Այսու՝ Մագիստրոսը այն եզակի մտավորականներից է, որ անտիկ համաբանությամբ իր մեջ զուգորդում է պետական խոշոր գործիչի դիվանագիտական հատկությունները բանաստեղծական էության հետ, մանկավարժությունը մակաբերում գիտության մակընթացումներից, եւ ինչպես նկատում է Ս. Պ. Հայրապետյանը «Տրամաբանութիւնը, քերականութիւնը, աստղաբաշխութիւնը եւ երաժշտութիւնը տեղ էին գրառում նրա դասացուցակներում իբրեւ առանձին, կրօնականից զատ դասընթացներ»:<sup>3</sup>

Մագիստրոսի գրական ժառանգության մեջ առանձնահատուկ են չափածո ստեղծագործությունները, որոնք իրենց կառուցվածքով, տաղաչափությամբ, խորքային ընդգրկումներով ու բառամթերքի «տիեզերականությամբ» մեր բանաստեղծական արվեստի մեջ յուրօրինակ տեսակներ են: Մագիստրոսի պոետիկան հաճախ խախտում է ժանրային սահմանները, ու արձակը-բազմիցս վերածվում է բանաստեղծության, իսկ բանաստեղծությունը՝ արձակի, եւ հախտումությունը նրա փոթորկվում է մերք «Աստվածաշնչի» հազարադարյան տաղասացությամբ, մերք աքրոստիքսների կատարյալ արտահայտությամբ, մերք նմանաձայնությունների ու առձայնությունների խտացմամբ, մերք էլ ներառում է հայերենի մեջ իր ժամանակներին հարկը անտիկ արեւելյան ու արեւմտյան քերթողական արվեստների նվաճումները: Նրա տաղասացությանց հեղեղի մեջ այնքան առատ են վտակները, որ դժվար է զանազանել, քե՛հ որտեղից են սկսվում նրա արվեստի ակունքները, վասնզի Մագիստրոսը իր չափածո ստեղծագործությունների մեջ ներկայանում է տաղասացության բացառիկ որակով: Հեղինական դպրության բարձունքներից մինչեւ իմաստությունները արեւելքի ճոխացեալ տրոպիում են նրա տողերի ներքո՝ զուգորդելով «...ի տաղասացութիւնս եւ հետադարձութիւնս եւ ի բանաստեղծութիւնս հզոր գոյով...»: Նրա ստեղծագործական ակունքները բազմալիսի տաղաչափական համակարգերի ամբարում են, որոնք հաճախ ուսումնասիրողներին մղել են ամենատարբեր փնտրությունների, գործիքնակ այսպիսի մի աղերս է տեսնում Սմբատ Ըահազիլը՝ գրելով՝ «Գրիգոր Մագիստրոսը յուր ժամանակի (11 դար) բազմակողմանի եւ տաղանդավոր ուսումնականներից մինը շնորք Զրիստոսի Աստուղ» երեք օրում հին եւ նոր կտակարանի պատմությունը փոխում է ուսանավոր՝ հազար տուն եւ յուրաքանչյուրը բաղկացած երկու տողից, ինչպես նույն դարու Իրանի ամենամեծ բանաստեղծը՝ Ֆիրդոսի, գրում է յուր ակնամավոր «Ըահնամե» 60 հազար տուն, նույնպես երկտող: Որպես երեսուն է, Գրիգոր Մագիստրոս հետեւել է Ֆիրդոսի բանաստեղծին, որովհետեւ Ֆիրդոսին յուր Ըահնամեն գրել է

<sup>1</sup> Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 236:

<sup>2</sup> Ներսես Շնորհալի, Վիպասանութիւն, Վենետիկ, 1820, էջ 410:

<sup>3</sup> Ս. Պ. Հայրապետյան, Հայոց հին եւ միջնադարեան գրականութեան պատմութիւն, Երևան, 1994, էջ 297:

1009 թվին, իսկ Մագիստրոս 1044 թվին: Մեկը սկսում է պարսից առասպելական դարերից, մյուսը՝ Ադամից մինչև երկրորդ գալուստը: Երկու ես բանաստեղծության ձևեր նույնն է»:<sup>1</sup>

Մագիստրոսի չափածո ստեղծագործությունների մեջ ուշագրավ են մտնում մի քանի բանաստեղծություններ, որոնց հմայքը շուրջ մեկ հազարամյակ չի դադարել, իսկ նրանց խորհրդավոր կառույցը, ասելիքի քավդեականությունը, դժվարահասությունը, բառաբաղադրման առեղծվածականությունը հուզել են բազումների: Դրանք տաղաչափության ու բառապատկերների փառահեղ զուգավորումներ են: Քրա՝ այդ ստեղծագործությունները դժվարագույն ու բազմաբարդ կառույցի պատճառով համարվել են անմատչելի, անգամ «Եզիպտական գրությանց մեծ անան անխմանալի բաներ...»:<sup>2</sup> Ն. Բյուզանդացին անդրադառնալով ընդհանրապես Մագիստրոսի գրական ժառանգությանը գրում է. «...ամենայն գրությունք եւ քարգմանութիւնք նորա մատախապատ են, եւ յաճախ կան բնաւ չեն հասկացուիլ, կան կը հասկացուին մերք հազիվ հազ, մերք այլ ընդ այլոյ...»<sup>3</sup>, իսկ Հ. Մենելիշյանը, Մագիստրոսի անմատչելի համարվող բանաստեղծություններից «Գամագտականի» վերծանողներից մեկը, շեշտում է՝ «Գր. Մագիստրոսի նամակներուն մեջ կան այնպիսիներ (մանաւանդ չափաբերական նամակներն), որոնք յունաբանութեամբ գրուած են, եւ կան ոմանք, որոնք քեւ յունարեն չեն, բայց հայերեն ալ չեն կրնա համարուիլ, զոնե հայ բանասերներու բոլոր գրագիտութեամբն ու աշխարհաբարագիտութեամբն ամբողջովին չեն կրնար մեկնուիլ, այնչափ խրթին ու դժուարիմաց են»:<sup>4</sup>

Նշված շոքայի մեջ հատկապես առանձնանում է «Առ որդին իւր...» ստեղծությունը, որը, հիրավի, մեր հայրենասիրական բանաստեղծական գոհարներից է: Այստեղ առավել խտացված են Մագիստրոսի դեպի հայրենի երկիրն ունեցած տոգորումները, թշնամյաց եւ հրոսակների հակահարված տալու նրա անհաղցալ մեղքն ու փոքրկամները: Դժբախտաբար, խորհրդային շրջանում Մագիստրոսը ըստ արժանվույն չի գնահատվել: Լինելով Թոմարակյան աղանդավորական շարժման կարկառուն հալածիչներից ու արմատախիլ անողներից մեկը, նա հաճախ բանադրվել է որպես առաջադիմության խաթարող, հորջորջվել «հայրենադավ» ու հունասեր: Դեռեւս Լեոն<sup>5</sup> նրան մեղադրում է ընդգծված բյուզանդասիրության ու կայսրապետական նկրտումների մեջ՝ գրելով՝ «Իր (Կոստանդնուպոլսում) ձեռք բերած գեղեցիկ դաստիարակության հետեւանքով էր, որ Գրիգոր Բջնեցին իր հայրենիքում հանդիսանում է իբրեւ մի գիտակից հայ, որը սակայն, այնքան էր տոգորված բյուզանդական գաղափարներով, որ հեշտությամբ կարող էր մոռանալ հայրենիքի շահերը: Այս տրամադրությամբ էլ մտնելով քաղաքական գործունեության ասպարեզ, նա իր շուրջը խմբեց մի ամբողջ հոսանք, որ ներկայացնում էր բյուզանդասերների, նույնիսկ կարելի է ասել՝ բյուզանդամոլների կուսակցությունը»:<sup>6</sup>

«Բյուզանդական կայսրությունը, նվաճելով Վասպուրականի թագավորությունը, ձգտում էր օր առաջ մուտք գործել նաեւ Անի: Պետրոս կաթողիկոսը, Գրիգոր Մագիստրոսը, Վեստ Մարգիսը նպատակ ունեին վերացնել Բագրատունյաց թագավորությունը եւ իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Նրանք իրենց նպատակն իրագործելու համար վճռական հարաբերությունների մեջ էին մտել Բյուզանդական կայսրության հետ, որը, սակայն, առաջնորդվում էր լոկ իր շահերից ելնելով: Քաղաքական այս բարդ իրադրությունների մեջ, ժողովրդի աչքի առջեւ՝ օրըստօրե ծավալվում էր Պետրոս կաթողիկոսի եւ նրա զինակիցների կործանարար գործունեությունը, գործունեություն, որի նպատակը հայոց երկիրը բյուզանդական լծի տակ դնելն էր»:<sup>7</sup>

Վերոգրյալ խնդրի առնչությամբ Մ Օրմանյանը Մագիստրոսի քաղաքական կյանքում տարբերակում է երկու փուլ՝ ազգային եւ բյուզանդասիրական եւ անցումը երկրորդին համարում Պետրոս Գետադարձից կրած ազդեցության արգասիք:<sup>8</sup> Սակայն Մագիստրոսի «Թոթերը» հիշյալ վարկածին հակառակ են տրամախոսում: Մ. Արեղյանը Մագիստրոսի քաղաքական գործունեության մեջ բյուզանդամոլության որեւէ նշույլ չի տեսնում: Հ. Բարթիկյանը անդրադառնալով արժարժված խնդրին, նշում է «Այս հարցում կասկածելու տեղիք է տալիս հենց ինքը՝ Գրիգոր Մագիստրոսը», ապա ի վերա այդ ամենայնի ճշմարիտ եզրակացնում «... մեր առաջ է կանգնում մի անձնավորություն, որին ծայր աստիճան մտահոգում է հայրենիքի ճակատագիրը, նրա ապագան»:<sup>9</sup>

Իրականում Հայաստանի համար ծանրագույն մի շրջանում Մագիստրոսը ամենայն հնարավորը արել է պահպանելու Շիրակի թագավորությունը, սակայն, դժբախտաբար, Բյուզանդական կայսրության գործող ճնշման ներքո միմիայն նրա ջանքերը ի դերել են եւել, եւ փակուղային իրավիճակն է կոտրել նրա համառությունը. «Գրիգոր որդի քաջին Վասակայ, ելեալ եւ նա գնաց առաջի թագաւորին : Եվ քանզի այր իմաստուն էր եւ խելամուտ յոյժ աստուածային գրոց, որպէս թէ ոչ այլ ոք, իբրեւ ետես եթէ ոչ են՝ թողոց զԳագիկ ի տեղի իւր զհայրենի ժառանգութիւնն...»:<sup>10</sup>

<sup>1</sup> Ըստագիգյան Սմբատ, Ամառային նամակներ, Մոսկվա, 1897, էջ 117:

<sup>2</sup> Հր. Աճառյան, Բանասիրական հետազոտություններ, Երևան, 1976, էջ 24:

<sup>3</sup> «Բանասեր», 1900, էջ 122:

<sup>4</sup> Հ. Մենելիշյան, «Գամագտականի» ամբողջական լուծումը, Վիեննա, 1912, էջ 5:

<sup>5</sup> Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ, Երևան, 1967, էջ 646:

<sup>6</sup> Ա. Ս. Մնացականյան, Թոմարակյան շարժման մի քանի գլխավոր հարցերի մասին, տեղեկագիր N 3, Եր., 1954, էջ 75:

<sup>7</sup> Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Ա, սյուն. 1215:

<sup>8</sup> Մ. Արեղյան, Հայոց եկեղեցականության պատմություն, գիրք Բ, Երևան, 1946, էջ 17-18:

<sup>9</sup> Էջեր հայ ժողովրդի պատմության եւ բանասիրության, Երևան, 1971, էջ 67:

<sup>10</sup> Լաստիվերցի, էջ 62:

Իր ԺԹ թղթում Գրիգոր Մագիստրոսը ոգեկոչում է մեր անցյալի փառքերը բանաստեղծական այնպիսի բացառիկ քնքշությամբ ու նվիրումով, որ մեղադրել նրան հայրենադավության մեջ առնվազն նշանակում է մեղանչել նույն հայրենիքի դեմ: Մերոց մախնյաց ու մահապետների վեհագնիվ հատկությունների անօրինակ գովերգումն է այն՝ վասն ներկա եւ գալիք սերունդների ազատասիրության ոգորման ու ոգեւորության: Ահա մի պատուիկ այդ հատվածից՝ «Ուր Գեղամայն գեղեցութիւն... Ուր Անուշաւան անուշալացն կազմիչ եւ բարութեան յարդարիչ... Ուր Վաշտակ որ ըստ անուանն վաշեակ... (այլ օր. վարշակ). Ուր Ամբակ որ միշտ մանուկ պատանեակ... Ուր Շաւարշ ըստ պարսկականին շար ի բաշ՝ միշտ ուրախ քարգմանեալ... Ուր Հրանտ հրատեսակ գեղատիպ... Ուր Պերճ պաճունասեր այր եւ սեզ ի Մանեան մահանգե... եւ այլն»:<sup>1</sup>

Նրա այս մտածումները, հայրենիքի համար թշնամուն խրոխտ դիմակայելու պատվախնդրությունը առավել շիկանում են վերը հիշված բանաստեղծության մեջ, որ կազմում է ԶԳ թուղթը: Մագիստրոսի թղթերի ժողովածուի հետագա կազմողը այս բանաստեղծությանը կցել է «Առ որդին իւր գօրանալ ի պատերազմին հասանելոյ եւ ի չարաբաստ ծերունոյն Նիկաւլայ այլաբար: Թե Մագիստրոսը հատկապես ո՞ր որդուն է ուղղել իր չափածո պատգամները մնացել է անհայտ: Հայտնի է, որ նա ունեցել է մի քանի որդիներ: Ըստ Կ. Կոստանյանցի այն ուղղված է առ Վահրամ որդին, որը հետագայում դարձել է կաթողիկոս Գրիգորիս կամ Գրիգոր Բ. անունով եւ գրական աշխատությունների պատճառով Մեծ Վկայասեր է կոչվել,<sup>2</sup> սակայն Հ. Բարթիկյանը ելնելով Մ. Օրմանյանի փաստարկներից, եզրակացնում է, որ խնդրո առարկա բանաստեղծությունը գրվել է 1028-1029 թթ., երբ Վահրամը հազիվ 5-10 տարեկան երեխա էր, եւ հազիվ թե Մագիստրոսը նրան դիմեր պատերազմի գնալու կոչով:<sup>3</sup> Կարծում ենք, որ ամենեւին էական չէ, թե հատկապես, որ որդուն է ուղղված բանաստեղծությունը, որով հետեւ իր շոշափած խնդիրներով նա կարող էր նվիրվել յուրաքանչյուր հայի: Համենայն դեպս Կոստանյանցի վարկածը հետո չէ տրամաբանական ճշմարտությունից, մանավանդ Մագիստրոսը այսպես է հասցեագրում. «... այլ իբր առ մանկականս քեզ կամեցայ յըստակ վճիտ շարագրել զայսոսիկ, զի մի՛ անկարելի ոմանց թուեցեալ, արտավազիկ արշաւանօք փախիցեն, այլ յիւրալուր եղեալ թերես լսիցեն. զի սովորեալ կաթին, կարասցեն զկնի այսր զմերս փութացուցանել բանաստեղծութիւնս, զի զկատարեալն կերակուր տացու՛ք իբր զքաջ խեղակէր: Ողջ լի՛ր»(թուղթ ԶԳ):

ԶԳ թուղթը, որը արքուստիքոս է եւ որի սկզբնաստեղծը կազմում են Վահրամ անունը, մոտեցման առումով համարյա նույն ոգին ունի «մանուկ դու, մախ ելոյ եւ ապա բարութ ելոյ» կամ՝ «եւ փոխարէնս հայցեմ ի քեմ գաւաղութիւնն մեր ոչ մոռանալ երբէք եւ զփոյթ սիրոյն առ Քրիստոս Աստուած մեր եւ զլոյս ճրագի մախնոյն մերոյ...»:

«Առ յուր որդին ...» բանաստեղծությունը իր հմայքով ու շեշտադրություններով կմնա մշտանմա: Ինքը Մագիստրոսը լավ գիտի իր ստեղծագործության արժանիքները, ուստի առանց կեղծ համեստության ԶԳ թղթի վերջում այսպես է գնահատում իր քերթվածքը. «Աղլ՝ ա՛ռ ընթերցի՛ր զարիեսա ոտանատրացդ. յիւցագնական է տաղդ, քաջ ոլորեալ, եւ տաղ պղպշում, օղում եւ զեղում, եռակի վանկօք շարակայեալ, լի, հոյժ, կատարում, շարժում, ոչ վիժեալ գծի, ոչ նուագեալ յօղի, ոչ փոփոխեալ տառին, կարեկցաբար առ իս ձգելով զծայնակիցսն, ստուգաբանութեամբ եւ շարակացուցեալ, շորթելով կամ ճողոպրելով ...»:

Ստորեւ ներկայացնում ենք այդ դյուցազնական տաղը բնագրով եւ մեր թարգմանությամբ, որում աշխատել ենք հնարավորինս հավատարիմ, մնալ բնօրինակի տաղաչափությանը եւ փորձել նրա մկանուտ կառուցվածքն ու տաղասացությունը շարագրել արդի գրականաբնականաշխարհին:

### Առ որդին իւր

*Լուսք քէ եկն պապն պաղսկ, վարդանասարն պիտակ  
Գիշերաբուն Բուղարաց, սպիտակափառն գեարդաս,  
Այրարարեանն զագաթն եւ Կողրայինն կալար,  
Պարագարուն պրաքսիս, սէզ գիշերեանն ճեմօր,  
Աւարառօղ, աւերօղ վարախամբաւն Նիկաւդաս:*

*Աղէ՛ զինեա՛, զինուորեա՛, սպառազինեա՛, դու վառեա՛.  
Արիաբար դու մրցեա՛ ի հանդիսի սրառիին  
Միամարտիկն վառիս, որ մերկանդամ մարտնչէր  
Փիղսաժանի անհառի քեզ ի դիմի հարկանի.  
Արջ անբառի շիկորակ քեզ մարտնչել հանդերձի:*

*Աղդ միլարեայն, դու պնդեա՛ զլայնալիճ հայրենին.  
Չերեքքեւեանն դու մխեա՛, յառաջ մարտի՛ր եւ քաղեա՛.  
Այս քեզ Բէլայն հաս հանդէս եւ Թորգոմեանն Հայկայ,  
Աճապարեա՛ եւ փութա՛, զի ես Կաղմեանն Արամեան.  
Ահա՛ հրոսակք անեցին, ահա՛ հաւսին քեզ քաղդեայք  
Այլ դու Տէրամբ գօրացի՛ր եւ Յիսուսի պարծեցի՛ր:*

<sup>1</sup> Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Սղեքսանդրապոլ, 1910, էջ 57-64:

<sup>2</sup> Նշվ. աշխ. էջ 315:

<sup>3</sup> Հ. Բարթիկյան, Նշվ. աշխ., էջ 68:

## Առ իր որդին

Լսեցինք, քե հասավ ծերուկը ցնդած, անբուժելի եւ բորոք,  
Գիշերաբուն բուլղարների՝ որսորդը սպիտակահառ,  
Գազաթն Այրարատյան եւ կապարը Կողայի,  
Հողացավից կաղացող, սեզ գիշերների ճեմող,  
Ավարող, ավերող Նիկողայը վաղահամբավ:  
Է՛յ դու, զինվիր, զինավորվիր, սպառազինվիր եւ վառվիր  
Արիաքար մրցիր, մրիր հանդիսավոր ասպարեզ,  
Վառվիր որպես միամարտիկ, որ կռվում էր մերկանդամ  
Անսանձելի փիղն անժանի քո դիմաց կրապավի,  
Եւ կպարտվի քեզնից անգամ շիկագույն արջն անկառնի:

Արդ դու պրկիր միալարյան լայնալիճը հայրենի,  
Երեքբեյանն մխրճիր, մարտիր հառաչ եւ քաղիր,  
Քեզ է հասել մարտը Բելի եւ Թորգոմյան մեր Հայկի  
Անապարի, փութա, քանզի Կաղմուխից եւ Արամյան  
Հրոսակները բազմացել են, քաղդեացիք հասել քեզ,  
Մակայն Տերով դու զորացիր եւ Հիսուսով պարծեցիր:

Սույն բանաստեղծությունը հայրենասիրական ընդհանուր ծիրի մեջ ունի կոնկրետ ուղղվածություն, այն հստակ առաքելության է կոչում դիմակայելու «Այրարատյան գազաթը» հասած «ավարող, ավերող» ուն բուլղար Նիկողայի: Ըստ Կ. Կոստանյանցի «խոսքը Նիկողայոս Կվասիլիասի մասին է, որը էր ազով բուլղար»:<sup>1</sup> Կոստանյանցը Մագիստրոսի հիշատակած Նիկողայի մախատիպը որոնելիս հենվել է բյուզանդագետ Լըբոյի «Nicolas Cavasilas ou Chryslis»<sup>2</sup> արտահայտության վրա: Մակայն ինչպես ցույց է տվել Հ. Բարթիկյանը Կոստանյանցի առաջարկած Կվասիլիասի անունը ոչ թե Նիկողայոս էր, այլ Կոնստանտին,<sup>3</sup> եւ լանդակարեւորը որեւէ փաստ չկա նրան համարելու ծագումով բուլղար: Հակառակ Կոստանյանցի՝ Հ. Բարթիկյանը որպես մախատիպ առաջարկում է բուլղար Նիկողայոս Զրիսելիտսին,<sup>4</sup> որը առավել հավանական հասցեատեր պատմական անձն է, եւ Ռոմանոս Գ. Արգիրիոս կայսեր օրոք կառավարել է Վասպուրականում:

Սկիզբն է դրվում «Ժամանակագրությունում»<sup>5</sup> վկայվում է, որ Բերկրի բերդի տեր սարակինոս Ալիմը դիվանագիտական նպատակներով այս ամբողջ համայնքում է Բյուզանդիոսին՝ իրաւ ունենալով, որ կայսեր կողմից անպայման կարժանանա պատրիկության եւ փառավոր ուշադրության: Խնդրո կապակցությամբ մա արքունիք է ուղարկում իր որդուն, իսկ բերդը ստանում է պատրիկ Նիկողայոս բուլղարը՝ մականվամբ Զրիսելիտս: Մափառունակ վերադառնալով համոզում է իրոր ետ գրավել իրենց բերդը: Հայր ու որդի համաձայնության գալով հարեւան պարսիկների հետ, վերանվաճում են ամբողջ, եւ, օգտվելով Նիկողայոս բուլղարի մեծամտությունից ու գոռոզամիտ բխող ինքնավստահությունից, սրի են քաշում հռոմեացիների վեց հազար զինվորների: Հետագայում միայն պատրիկ Նիկետաս Պեգոնիտեսը կայսերական եւ ռոսական ուժերի օգնությամբ կարողանում է գրավել Բերկրին ու սպանել Ալիմին եւ նրա որդուն:

Նիկողայոսի մախատիպի բացահայտմամբ հստակ է դառնում այս բանաստեղծության գրման մոտավոր թվականը՝ 1028-1034 թե ի վերա ո՞ր պատմական անցքերի ստեղծվել այն: Այսուհիլ բխում է, որ այն ըստ ինքյան ոգեկոչում է ի փառս Հայաստանի անկախության եւ ընդդեմ բյուզանդական կայսրապետական ծավալումների: Այն լի է հաղթանակի նկատմամբ անսահման հավատքով եւ չունի երկյուղածության ու անկումայնության որեւէ նշույլ, ուստի հայոց մեծագույն հաղթանակի խորհրդանիշները «լայնալիճը հայրենի եւ երեքբեյանն» վեր են հանում վերստին ի սարսափ թշնամյաց: Մագիստրոսը հաղթանակի գլխավոր գրավականն է համարում արիությունը, առաջնայինը ներքին, հոգեւոր հաղթանակը, որի դեմ կտապալվի անժանի «անսանձելի փիղը» եւ կպարտվի անգամ «շիկագույն արջն անկառնի»: Ըստ Մագիստրոսի, ում մեջ ծփում է արյունը «Կաղմեանն Արամյան», երկըմարանքի ու վարանելու թերաթեթության բարդությ չպիտի ունենա, այլ ընդհակառակը այդ արյան ժառանգորդը պիտի աճապարի եւ փութա դիապաստ անելու Նիկողայոս պես ավարառող եւ ավերող հրոսակներին: Թվարկյալ հատկանիշների ոգորումը հայի ներսում առհավատչյան է հաղթանակի, որի կիզակետն է հանդիսանում Հայկի ու Բեկի մարտը: Մագիստրոսը շեշտում է, որ պատմության պարբերականությամբ այդ մարտը եկել-հանել է քեզ, եւ հիմա էլ քո ժամն է հերոսականության ու սխրագործելու:

Բանաստեղծությունը ավարտվում է «Այլ դու Տերամբ զորացիր եւ Յիսուսի պարծեցիր» տողով, որով Մագիստրոսը ընդգծում է իր ուղղափառ վերաբերմունքը առ աստված: Մակայն Մագիստրոսի աշխարհըմբռնու-

մը հարիր չէ իր ժամանակներում շրջանառության մեջ մտած անձի ճգնակեցության եւ ապաշխարային մեկուսացման դավանաբանական եզրահանգումներին: Նրա հերոսը ամենը երկնքի ու ճակատագրի վրա բարդող կրավորական արարած չէ, այլ սեփական ուժին ապավինող զորեղ անհատն է, որին էլ կոչում է դիմակայելու թշնամյաց:

**ՏԱԱԿՅԱՆ Վ. Տ. — Наброски в патриотической поэзии Григора Магистроса.** Григор Магистрос - один из видных деятелей Армянского средневековья. Будучи одним из главных преследователей армянского сектантского движения, ортодоксально защищая интересы Армянской церкви и государственности, он не был оценен по достоинству в Советском периоде. До нас дошли поэтические произведения Магистроса, которые в многовековой армянской литературе занимают особое место. В статье обсуждаются особенности этих произведений. Автор свое внимание сосредотачивает на одном из произведений Магистроса, которое своим патриотическим содержанием и метрикой являет жемчужины Армянской средневековой культуры.

<sup>1</sup> «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 234:

<sup>2</sup> Lebeau, Histoire du Bas-Empire, Nouvelle édition par Saint Martin, t. XIV, Paris, 1833, p. 280.

<sup>3</sup> Հ. Բարթիկյան, նշ. աշ., էջ 69:

<sup>4</sup> Նշ. աշ., էջ 69-70:

<sup>5</sup> Georgii Cedreni, Historiarum compendium, t. II, p. 502-503.